ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբերի 2011թ. N 363

Ք.Արմավիր

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, ԱՆՅՈՒՏԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ, ՆՈՐԱՅՐ ՍԱՄՎԵԼԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ, ՄԱՐԳԱՐԻՏԱ ՍԱՄՎԵԼԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի ղեկավարի 2011 թվականի հոկտեմբերի 17-ի N 9-Ա որոշումը, Սամվել Գրիգորյանի և Վարդանաշեն համայնքի ղեկավարի միջև 2011 թվականի հոկտեմբերի 17-ին կնքված բնակարանի վարձակալության մասին պայմանագիրը և Սամվել Գրիգորյանի 2011 թվականի հոկտեմբերի 19-ի դիմումը.

որոշում եմ՝

1. Սամվել Գրիգորյանին, Անյուտա Թադևոսյանին,Նորայր Սամվելի Թադևոսյանին, Մարգարիտա Սամվելի Թադևոսյանին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի ղեկավարի 2011 թվականի հոկտեմբերի 17-ի N 9-Ա որոշմամբ վարձակալական հիմունքներով հատկացված Վարդանաշեն գյուղական համայնքի 1-ին փողոցի թիվ 30 շենքի թիվ 3 հասցեում գտնվող մեկսենյականոց բնակարանը՝ 36.7 քմ ընդհանուր մակերեսով, անհատույց մասնավորեցնել՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ